Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2026 թվականի
փետրվարի 10-ի N -Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ԻՀ 03
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«26» դեկտեմբեր 2025թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ մասերի, 96-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի N 725-Ա որոշումը՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից, մասնակցությամբ խմբի ղեկավար՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Արամ Անտոնյանի, խմբի անդամներ՝ ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական Գրիգոր Ավետիսյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության գլխավոր մասնագետ Գառնիկ Սիմոնյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Տիգրան Անանիկյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Հրանտ Թորոսյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Աննա Գյունաշյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Դավիթ Նազարեթյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Մինասյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ Շիրակ Երանոսյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ Կարինե Սերոբյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Աղավնի Հարությունյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Արմեն Ստամբոլցյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ Հովհաննես Գաբրիելյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ Արամ Իսահակյանի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Վահան Մարտիրոսյանի ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքում իրականացվեց իրավական հսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ՝ համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, ֆինանսների, պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և

քաղաքացիական պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջապահության, սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, շրջակա միջավայրի պահպանության և զբոսաշրջության բնագավառներում, որն ընդգրկել է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակաշրջանը:

Իրավական հսկողությունն սկսվել է 2025 թվականի դեկտեմբերի 15-ին և ավարտվել է 2025 թվականի դեկտեմբերի 19-ին:

1. Իրավական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը, կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Իրավական հսկողության արդյունքների ու իրավական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից առարկություններ չեն արձանագրվել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ ----------

Աշխատանքային խմբի անդամներ՝

ԳՐԻԳՈՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ ----------

ԳԱՌՆԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ ----------

ԲԱՐՍԵՂ ՔՈՉԱՐՅԱՆ ----------

ՏԻԳՐԱՆ ԱՆԱՆԻԿՅԱՆ ----------

ՀՐԱՆՏ ԹՈՐՈՍՅԱՆ ----------

ԱՆՆԱ ԳՅՈՒՆԱՇՅԱՆ ----------

ԴԱՎԻԹ ՆԱՋԱՐԵԹՅԱՆ ----------

ԱՐՄԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ .....

ՇԻՐԱԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ .....

ԿԱՐԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆ .....

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ .....

ԱՐՄԵՆ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ .....

ՋԱՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ .....

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ .....

ԱՐԱՄ ԻՍԱՀԱԿՅԱՆ .....

ՎԱՀԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ .....

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող՝

ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ .....